



Լիբանանեան Լուրեր

Պայթում Մը Տնցեց Լիբանանի Հարաւը



Երէկ երեկոյեան, պայթում մը տնցեց Լիբանանի հարաւի Սուր քաղաքը: Պայթումին մասին աւելի մանրամասն գրեցի ՝ Թելէկրամի ալիքով, ուր նշուեցաւ, որ պայթումը պատահած է պաղեստինեան Պուրժ Ալ Շամալի գաղթակայանին մէջ: Պայթումին հետեւանքով ծագած է մեծ հրդեհ մը: Արձանագրուած են զոհեր եւ վիրաւորներ: Պայթումին պատճառներուն մասին այս պահուն կան մէկէ աւելի վարկածներ:

Լուրեր Արաբական Աշխարհէն

Միջազգային Դաշինքի Ուժերը Կը Հեռանան Իրաքէն



Իրաքի Ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Զասէմ Աարաժին յայտարարած է միջազգային դաշինքի ուժերու մարտական առաքելութիւններու աւարտին եւ Իրաքէն անոնց դուրսբերման մասին:

Աարաժին յաւելած է, որ «աւարտած է անցեալ տարի միջազգային դաշինքին հետ սկսած երկխօսութեան վերջին փուլը»՝ նշելով, որ «միջազգային դաշինքի ուժերու մարտական առաքելութիւնները պաշտօնապէս աւարտած են եւ անոնք դուրս եկած են Իրաքէն»: Ան շարունակեց, որ «Միջազգային դաշինքին հետ յարաբերութիւնները պիտի շարունակուին ուսուցման, խորհրդատուութեան եւ հզօրացման ոլորտին մէջ», նշելով, որ «կողմերը վերահաստատած են շարունակական համագործակցութեան իրենց յանձնառութիւնը՝ յստակ սահմանելով, թէ ինչպէս դաշինքը պիտի շարունակէ աջակցիլ Իրաքի անվտանգութեան ուժերուն կողմէ իրականացուող գործողութիւններուն»:

Իր հերթին, Իրաքի Նախագահ Պարհամ Սալիի Յուլիսի վերջին օրերուն ըսած էր, որ «Իրաք-ամերիկեան ռազմավարական երկխօսութեան արդիւնքները կարեւոր են կայունութեան հասնելու եւ Իրաքի ինքնիշխանութեան ամրապնդման համար, որոնք կու գան Մուսաթաֆայի գլխաւորած կառավարութեան անխոնջ աշխատանքին շնորհիւ»: Սալիի յաւելած է, որ «Իրաքի շահը կը պահանջէ ամրապնդել պետական հաստատութիւնները, պաշտպանել ինքնիշխանութիւնը եւ անկախ ազգային որոշումներ կայացնել»:

Հայկական Լուրեր

1 Ձոհ, 8 Վիրաւոր՝ Ազրայէճանի Յարձակման Իրեւ Հետեւանք

Դեկտեմբեր 10-ին, ՀՀ արեւելեան ուղղութեամբ (Գեղարքունիքի մարզ) Ազրայէճանի ՉՈՒ ստորաբաժանումներու ձեռնարկած Նախայարձակ գործողութիւնները դիմակայելու ընթացքին զոհուած է ՀՀ ՊՆ Ն գորամասի ժամկետային զինծառայող, շարքային Վահէ Վաղարշալի Մանասերեանը (2002-ի ծնունդ): Այս մասին կը յայտնեն ՀՀ Պաշտպանութեան Նախարարութենէն:



Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան Նախարարութիւնը կը կիսէ կորստեան ծանր վիշտը եւ զօրակցութիւն կը յայտնէ զոհուած զինծառայողի ընտանիքի անդամներուն, հարազատներուն եւ ծառայակիցներուն: Ուրբ այլ զինծառայող վիրաւոր է: Վեց զինծառայողի վիճակը կը գնահատուի ծանր, միւս երկուքը, համապատասխանաբար, միջին եւ թեթեւ:

Դատարանը Վերացուց Արմէն Զարչեանի Խափանման Միջոցը



Երեւանի Ընդհանուր իրաւասութեան դատարանը՝ Նախագահութեամբ դատաւոր Վահէ Միսաքեանի, հրապարակած է Արմէն Զարչեանի գործով միջնորդութեան վերաբերեալ իր որոշումը՝ վերացնելով անոր նկատմամբ խափանման միջոց կալանքը: Արմէն Զարչեան ազատ արձակուեցաւ Նիստերու դահլիճէն:

Դատաւորը յայտարարեց, որ խափանման միջոց կ'ընտրուի ստորագրութիւնը չհեռանալու մասին:

Ալընտրանքային Ճանապարհը Լուծում ԶԷ, Ապահովուած ԶԷ Մարդոց Անվտանգութիւնը. ՄԻՊ

ՀՀ Մարդու իրաւունքներու պաշտպան Արման Թաթոյեան, այսօր, Սթրազպուրկի մէջ հանդիպում ունեցած է Եւ զլխաւոր քարտուղար Մարիա Պէյքիսովիչ Պուրիչի հետ: Այս մասին ան գրած է Facebook-ի իր էջին:



ՀՀ Մարդու իրաւունքներու պաշտպանը գրած է, - «Հանդիպման ընթացքին օրինակներով ցոյց տուած եմ, որ պատերազմէն անմիջապէս ետք ազրայէճանական զինուած ծառայողները կը կատարեն Հայաստանի բնակչութեան իրաւունքները կոպիտ խախտող արարքներ՝ սկսեալ այն պահէն, երբ յայտնուած են Սիւնիքի եւ Գեղարքունիքի մարզերու գիւղերու հարեւանութեամբ եւ Սիւնիքի համայնքներու միջեւ ճանապարհներուն. կրակոցներ, արօտավայրերու հրդեհում եւ այլն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բիրտ Ուժի Կիրառմամբ Ընդհատուեց Ազատագրական Շարժման Խաղաղ Բողոք-Հաւաքը

Ազատագրական Շարժումը հետեւեալ յայտարարութիւնը տարածած է երէկ.



«Ազատագրական շարժման անդամները Դեկտեմբերի 10-ի առաւօտեան ժամը 10:00-ին խաղաղ բողոք-հաւաք նախաձեռնեցին ՀՀ ԱԳՆ շէնքի հանրային տարածքում՝ նախարարից պահանջելով հերքել կամ հաստատել վարչապետ Նիկոլ Փաշինեանի խօսքերը Արցախի Ազրայեճանապատկան լինելու մասին:

ՀՀ ԱԳ նախարարը կամ որեւէ լիազօր ներկայացուցիչ չհանդիպեց Ազատագրական շարժման անդամների հետ, չտուեց որեւէ բացատրութիւն 08.12.2021թ. ԱԺ-ում Նիկոլ Փաշինեանի յայտարարութեան վերաբերեալ, ըստ որի՝ հայկական կողմը կորցրել է Արցախը Ազրայեճանի կազմից դուրս լինելու որեւէ տեսական կամ գործնական հնարաւորութիւն:

Կարճ ժամանակ անց գործի դրուեց ոստիկանութեան բիրտ ուժը Ազատագրական շարժման անդամների նկատմամբ, որոնցից 13-ին բերման ենթարկեցին ոստիկանութեան տարբեր բաժիններ: Մենք արձանագրում ենք, որ ոստիկանութիւնը թոյլ է տուել անօրինական գործողութիւններ՝ բերման ենթարկելով նոյնիսկ գործող փաստաբանների, եւ բռնի ուժ կիրառել Ազատագրական շարժման անդամների նկատմամբ:

Ազատագրական շարժումը համարում է, որ Նիկոլ Փաշինեանը իրականացնում է հակահայկական քաղաքականութիւն եւ պահանջում է նրա ու նախագահի հրաժարականը, քանի որ այդ երկու պաշտօնեաներն իրենց գործողութիւններով վտանգ են ներկայացնում ինչպէս Արցախի, այնպէս էլ ամբողջ ՀՀ պետականութեան համար:

Ցաւօք, ասուածի եւս մի ապացոյց դարձաւ Գեղարքունիքի մարզում երէկ եւ այսօր տեղի ունեցած Ազրայեճանա-հայկական ռազմական բախումը, որի հետեւանքով կրկին կորուստներ ունեցանք:

Ազատագրական շարժումը շարունակում է պայքարը հակահայկական իշխանութիւններից ազատելու եւ հայկական պետականութիւնը ուժեղացնելու համար»:

«Շաբաթ» դեկտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին Ծիծեռնակաբերդի բարձունքից)Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի մօտի աստուկայանատեղից(կը մեկնարկի իրազեկման աստորթ դէպի Սարդարապատ, որտեղ ժամը 15:00-ին տեղի կ'ունենայ հաւաք: Բոլոր ցանկացողները կարող են միանալ աստորթին» - աստորթին մասնակցելու այս կոչով ալ Ազատագրական Շարժումը եզրափակած է իր կոչը::



Պատմութեան Մէջ Այսօր

Հերման Ապիխ

Ապիխ Հերման Ուլիլիելմ (11 Դեկտեմբեր 1806, Պերլին, Պրուսիոյ թագաւորութիւն - 1 Յուլիս 1886, Վիեննա, Աւստրո-Հունգարիա), գերմանացի երկրաբան, Փէթերսպուրկի «Գիտութեան Ակադեմիա»-ի ակադեմիկոս (1853) եւ պատուաւոր անդամ (1866): Աւարտած է Պերլինի համալսարանը (1831): Հետազօտած է Իտալիոյ հրաբուխները: 1842-ին. հրաւիրուած է Ռուսիոյ Կայսրութիւն եւ մինչեւ 1844-ը վարած Դորպատի համալսարանի հանքաբանութեան ամպիոնը: Ակոռիի երկրաշարժի (1840) պատճառներն ուսումնասիրելու նպատակով 1844 թ. եկած է Հայաստան, Անիի մէջ կատարած է քաղաքի հանոյթը, կազմած է անոր գլխաւոր շինութիւններուն գծագիրը:

1845 թուականին բարձրացած է Արարատ լեռը (Յուլիս 17-ին հասած է գագաթը): Լեռան տուած է երկրաբանական նկարագրութիւնն ու կտրուածքները: Հայաստանի մէջ Ապիխին հինգ ամիս 22 օր ուղեկցած է Խաչատուր Աբովեան, տեղեկութիւններ հաղորդելով Երեւանի նահանգի մասին:

Ապիխ հրատարակած է «Կովկաս-



սեան Երկրների Երկրաբանութեան Ներածական Տեսութիւն» (1859), «Երկրաբանական Դիտումներ Կուրի եւ Արաքսի Միջեւ Եղած Լեռնաշխարհում» (1867) աշխատութիւնները: 1876-ին, տեղափոխուելով Վիեննա, հիմնականօրէն զբաղած է Կովկասի մէջ հաւաքած նիւթերու մշակմամբ ու հրատարակած «Երկրաբանական Հետազօտութիւններ Կովկասեան Երկրներում» (1878-1887) եռահատոր աշխատութիւնը, որուն 2-րդ եւ 3-րդ հատորները նուիրուած են Հայկական լեռնաշխարհին:

Կովկասի երկրաբանութեան վերաբերեալ Ապիխ գրած է յիսունէն աւելի աշխատութիւն, առաջին անգամ գիտականօրէն բացայայտած անոր բնութեան ֆիզիկա-աշխարհագրական առանձնայատկութիւնները եւ լեռնային՝ գրագիտական, բնոյթը: Ապիխը կը համարուի «Կովկասի երկրաբանութեան հայրը»:

Հայկական Լուրեր

Արևտրանքային Ճանապարհը Լուծում ԶԷ, Ապահովուած ԶԷ Մարդոց Անվտանգութիւնը. ՄԻՊ

Սկիզբը Էջ 01

Յատուկ անդրադարձած են Սիւնիքի մէջ ճանապարհներու արգելափակման, նշած, որ արևտրանքային ճանապարհը լուծում չէ, քանի որ ապահովուած չէ մարդոց անվտանգութիւնը. ազրայեճանական զինուած ծառայողներու նշանառութեան տակ են ճանապարհը, քաղաք-ցիական բնակիչները, անոնց տուները: Շեշտած են, որ խախտումներու վերացման իրական լուծումը բոլորովին այլ է. ատիկա ազրայեճանական զինուած ծառայողներու հեռացումն է մեր գիւղերու հարեւանութենէն ու ճանապարհներէն:

Պէտք է ըլլայ ապառազականացուած (անվտանգութեան) գօտի, որուն ՀՀ մարդու իրաւունքներու պաշտպանի առաջարկին հիման վրայ արդէն իսկ տեղ գտած է ԵԽԽՎ 2021թ.

Սեպտեմբեր 27-ի բանաձեւին մէջ: Բացատրած են, որ ատիկա չի նշանակեր, թէ այդ կերպով մէկ անգամէն կ'որոշենք՝ ի՞նչ կամ որո՞ւն տարածքն է: Ատիկա պիտի որոշուի յետագային՝ առնուազն զուգահեռ սկսուած դելիմիտացիայի ու դեմարկացիայի իբրեւ արդիւնք, բայց պէտք է ամեն ինչ ընել մարդոց բնականոն կեանքը, անվտանգութիւնը վերականգնելու համար:

Հանդիպման ընթացքին առանձին նշած են, որ խնդիր է, որ միջազգային կառոյցները չեն այցելել Արցախ (Լեռնային Ղարաբաղ). այնպէս է՝ Եւրոպայի խորհուրդի տարածքին մէջ կայ վայր, որ հասանելի չէ ընդհանրապէս, որ կը հակասէ նոյնինքն Եւ խորհրդարանական վեհաժողովի բանաձեւերուն:

Շար. Էջ 07

Որով՞ քուեարկել (Հայաստանի տեղական կառավարման ընտրություններուն առթիւ)

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ



Միքանի ամիսէ ի վեր պարբերաբար ընտրություններ կը կատարուին Հայաստանի Հանրապետութեան զանազան վայրերուն մէջ՝ տեղական կառավարման մարմիններու առումով:

Տեղական կառավարման մարմիններու պարբերական ընտրությունները կ'արտացոլացնեն ժողովրդավարութեան տեսական նախապայմաններէն մէկուն բաւարարումը: Անոնք - ինչպէս որեւէ ընտրություն - նաեւ կը թարմացնեն պաշտօնավարութեան ուժականութիւնը:

Ոմանք ուշադրութեամբ կը հետեւին այդ ընտրություններուն՝ իբրեւ ջերմաչափը կամ արտացոլանքը հանրապետութեան մէջ քաղաքական ուժերուն ներկայ վիճակին:

Սփիւռքի մէջ կայ մեծամասնութիւն մը որ կը պաշտպանէ այս կամ այն կողմը:

Զտորվեցանք որ Խորհրդային Հայաստանը մեր հայրենիքը նկատել ու չնկատելը, ՀՀԿական ըլլալն ու չըլլալը, Քոչարեանական քեմիին պատկանիլը կամ հակադրուիլը, Սերժ-Սարգսեանական կամ ընդդիմութեան կողմ ըլլալը, այսօր ալ Փաշինեանական ըլլալն ու չըլլալը մեզ բոլորս, հայկական միասնական Եթիք միաւորը - իր բոլոր գունաւորումներով - մեր մակերեսային կողմնորոշումներուն հետեւանքով մեզ կը մասնատէ ու կը տկարացնէ եւ կը շեղէ մեր հիմնական տեսադաշտէն: Մենք սկսած ենք - խորքին մէջ շատոնց է այս վիճակին մէջ ենք - ծառը տեսնել, առանց ետեւի անտառը գիտակցելու: Մենք մեր հրատապ օրակարգերու առաջնայնութիւնը դարձեալ եւ գրեթէ միշտ խախտած ենք:

Ես, նաեւ իբրեւ Հայաստանի քաղաքացի, քուեարկելու պարագային պիտի չփնտռէի անունները թեկնածուներուն, այլ պիտի ուզէի իշխանութեան վրայ տեսնել իրաւ, ազնիւ, մարդկային մարդեր, որոնք անտառին մասին կը մտածեն:

Գիտեմ, բաւարար չէ մտածելը. Խօսի՛ր, կարելոր է նաեւ գործելը: Ուստի եւ պիտի վերատեսութեան երթարկէի իմ քուէիս հասցէն երբ անոր հասցէատերը գործէ խօսքի անցնելու ճամփուն վրայ կը շեղի եւ հրապարակաւ պիտի յայտնէի թէ ես, որ իբրեւ քաղաքացի քուեարկած էի այսինչին՝ իր ծրագրերուն եւ խոստումին համար, հիմա -երբ ան խախտած ու դրժած է իր խոստումը - յետս կը կոչեմ իմ քուէս:

ՅԳ. Խօսքս չուղղուիր այս կամ այն անհատին, թեկնածուին ու կուսակցութեան: Չայն պէտք է հասկնալ իր բացայայտ իմաստով եւ խոր ծալքեր չփնտռել այնտեղ:

Էրտողան եւ Թրքական Լիրան

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Մերկայիս թրքական լիրայի արժեքի փոփոխութեան հետեւողը յստակ եւ անկասկած կը տեսնէ, որ անոր արժեքը կտրուկ անկումի մէջ է տոլարի նկատմամբ Թուրքիոյ եւ համաշխարհային սակարանին մէջ: Բոլոր լրատուական աղբիւրները, նոյնիսկ Թուրքիոյ վարչակարգին բարեացակամ, կը հաստատեն թրքական լիրայի արժեքի անկումը ԱՄՆ-ի տոլարի նկատմամբ ամենացած մակարդակը, որովհետեւ անոր փոխարժեքը մէկ տոլարի դէմ 12 լիրա գերազանցած է 2021-ի Նոյեմբեր 24-ին: Իսկ մէկ շաբաթ ետք երբ Թուրքիոյ Նոր ելեւմտական նախարարը նշանակուեցաւ լիրային արժեքը հասաւ 14 լիրայի տոլարի դէմ:

Թրքական լիրայի արժեքի շարունակական անկումը երբեք զարմանալի չէ եղած տեղական եւ համաշխարհային դրամատուներու եւ սակարաններու համար, որովհետեւ 2005 թիւին լիրայի գերութիւնը ջնջելէն ետք այդպէս եղած է անոր վիճակը, սակայն Նորութիւնը այն է, որ ան մեծ կորուստ արձանագրած է ԱՄՆ տոլարի նկատմամբ երբ արժեքը վերջինին համեմատ հասած է 14 լիրայի, մինչդեռ Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրտողանը կը շարունակէ իր դրամական քաղաքականութեան հաւատարիմ մնալ դրամատուներու տոկոսները կրճատելով եւ նուազեցնելով առանց իր գործընկերներու խորհուրդները ու առաջարկները ընդունելու:

Յունուար 1, 2005-ին թրքական լիրայի արժեքէն վեց գերօ չեղեալ յայտարարուեցաւ: 2004-ին վերջերը լիրայի փոխարժեքը հասած էր 1,350,000 լիրայի մէկ տոլարի դէմ. Թրքական թղթադրամը տպուեցաւ Թուրքիոյ մէջ եւ շուկայ ելաւ 6 արժեքներով: 1, 5, 10, 20, 50 եւ 100 լիրայով. գերութիւնը ջնջումի պատճառը այն էր որ 30 տարիէ ի վեր Թրքական լիրան շարունակ արժեքազրկուած եղած է, եւ շուկայի մէջ մէկ միլիոն լիրան որեւէ արժեք չունէր, իսկ 20,000,000 լիրայի (20 միլիոն լիրա) դրամանիշը աշխարհի մէջ ամենամեծն էր եւ կ'օգտագործուէր միայն Թուրքիոյ մէջ: 2005-ին գերութիւնը ջնջելու քաղաքականութիւնը հաստատուէն ետք տոլարի արժեքը մէկուկէս լիրայէն պակաս էր (1.350 լիրա):

Այդ ճգնաժամէն յետոյ լիրան շարունակեց կորսնցնել իր արժեքը, սակայն ընդունելի եղանակով միշտ ազդուելով Թուրքիոյ կառավարութեան եւ Էրտողանի քաղաքականութեան որոշումներով, որոնք պատճառ եղան այս տարուայ (2021 թ.) սկիզբէն տոլարի փոխարժեքը զգալիօրէն բարձրանալու լիրայի դէմ: Լիրայի արժեքի այս անկումի հիմնական պատճառներէն մէկը Թուրքիոյ նախագահի պնդումն է դրամատուներու տոկոսները կրճատելը: Կառավարութեան ներքին ընդդիմադիրները, որոնք Էրտողանի որոշումներուն դէմ էին, անոնցմէ ազատուելու եւ իր որոշումը պարտադրելու համար Էրտողանը վերջին երկու տարիներու ընթացքին հեռացուց Կենտրոնական Դրամատան երեք կառավարիչներ եւ քաղաքական յանձնաժողովի բոլոր անդամները, որոնք դէմ էին իր որոշումներուն, ինչպէս նաեւ Կենտրոնական Դրամատան դրամավարկային քաղաքականութեան կոմիտէի անդամներուն, որոնք նմանապէս դէմ էին անոր քաղաքականութեան, այդպէսով լիրան տոլարի նկատմամբ աւելի ցածր մակարդակի հասաւ, որովհետեւ ըստ տնտեսագետներուն, պէտք է տոկոսները բարձրանան, երբ դրամի մը արժեքը կ'իյնայ, որ դրամը շուկաներէն քաշուի դէպի դրամատուները, սակայն Թուրքիոյ նախագահի քաղաքականութիւնն է նուազեցնել տոկոսները խթանելու արտադրութեան եւ առեւտուրի ոլորտը դրամատուներէն աւելի ցած տոկոսներով վարկ ստանալով:

Թրքական լիրան զգալուն է արտաքին ճգնաժամերու նկատմամբ, յատկապէս ԱՄՆ-ի հետ ճգնաժամերու նկատմամբ, և որեւէ լարուածութիւն Թուրքիոյ ու ԱՄՆ-ի միջեւ անպայման բացասական ազդեցութիւն կ'ունենայ թրքական լիրայի վրայ: Մենք կը յիշենք Թուրքիոյ մէջ բանտարկութեան դատապարտուած ամերիկացի քարոզիչ Անտրո Պրօնսընի խնդիրը, և թէ ինչպէս Թուրքիոյ համար շատ ծանր եղան անոր կալանքի հետեւանքները: Ամերիկան քանի մը տնտեսական որոշումներ հաստատեց Թուրքիոյ դէմ, որոնք մէկ երկու օրուայ ընթացքին լիրային մեծ վնաս հասցուցին եւ ան զգալի տոկոսով իր արժեքը կորսնցուց. Էրտողան ստիպուած ազատ արձակեց Անտրո Պրօնսընը. լիրան վերականգնեցաւ այդ դէպքէն ետք՝ եւ ետ վերադարձաւ այն մակարդակին, ուր որ էր: Հոս արժանի է յիշել որ Զաթարի կառավարիչ Շեյխ Թամիմ Պըն Համետ այդ ճգնաժամին օգնութեան հասաւ ինկզ միլիար տոլարի ներդրումով իր դաշնակից Էրտողանին, որուն հետ միասին պայքարի մէջ էին Սեւեական Արաբիոյ ու Արաբական Եմիրութիւններ գոյգի դէմ:

ԹՄՄ-ի Լուրեր

«Այսօր, Առաւել Քան Երբէւէ, Անհրաժեշտութիւն Է Հայոց Պատմութեան Բոլոր Փուլերի Ուսումնասիրումը». «Վահան Թէքէեան» Մրցանակակիր Արման Եղիազարեան

ՔՐԻՍՏԻՆԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ


«Հայոց պատմութեան կարեւորագոյն փուլերից մէկը՝ Բագրատունեաց դարաշրջանը, երբեք խորութեամբ ու ըստ արժանւոյն չի ուսումնասիրուել: Եղել են տարբեր թեմատիկ անդրադարձներ, սակայն թագաւորների, նրանց գործունեութեան պատմաքաղաքական գնահատականի, ձեռքբերումների եւ թերացումների մասին որեւէ առանձին ուսումնասիրութիւն չի եղել: Ես խորամուխ եղայ նման հետազոտութեան եւ մատենաշարով փորձեցի ներկայացնել Բագրատունի հայոց արքաների գահակալութեան տարիները»,- նշում է Հայաստանի «Թէքէեան» Մշակութային Միութեան «Վահան Թէքէեան» մրցանակաբաշխութեան 2021 թուականի «Հայագիտութիւն» անուանակարգի յաղթող, պատմական գիտութիւնների դոկտոր, Փրոֆեսոր Արման Եղիազարեանը:



Վերջինս մրցանակի է արժանացել «Աշոտ Գ Ողորմած թագաւոր հայոց» աշխատութեան համար: Մենագրութիւնն Էական ներդրում ունի հայագիտութեան մէջ, քանի որ ներկայացնում է չուսումնասիրուած պատմափուլերից մէկը՝ Բագրատունիների թագաւորութեան շրջանը: Օգտուելով գիտական շրջանառութեան մէջ նաեւ երբեւէ չօգտագործուած աղբիւրներից՝ Արման Եղիազարեանը ոչ միայն ներկայացրել է վերլուծել է Աշոտ Գ Ողորմած թագաւորի գործունեութիւնը, այլեւ խորութեամբ բացայայտել Հայաստանի տուեալ ժամանակաշրջանի պատմութիւնը, որը նախկինում մանրամասնօրէն ուսումնասիրուած չէր:

Աշոտ Առաջին, Աշոտ Երկաթ, Աբաս, Աշոտ Գ Ողորմած. սրանք մատենաշարի այն առանձին գրքերն են, որոնցում հեղինակը բացայայտել է Բագրատունի թագաւորների գործունեութեան՝ դեռնա չբացայայտուած կողմերը,

ներկայացրել նրանց որպէս պետական-քաղաքական գործիչ, բարեգործ կամ հայոց պատմութեան մէջ այլ դերակատարում ունեցող թագաւոր:



«Աշոտ Գ Ողորմածի կերպարը մեզ համար բացայայտուած չէր: Նա քիչ ուսումնասիրուած, բայց խոշոր քաղաքական դէմք էր, որ կրել է «թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց» տիտղոսը: Ի՞նչ տիտղոս էր սա, ոչ ոք չի անդրադարձել: Նրա մասին մի քանի էջով կայ միայն Ասողկի մօտ. պատմաբանները բաւարարուել են միայն պատմիչի տեղեկութիւնները լուսաբանելով»,- նկատում է Արման Եղիազարեանն ու վստահեցնում թէւէ նոր աղբիւրներ գտնելը, եղածները նորովի «խօսեցնելը» դժուար աշխատանք է, սակայն դրանք հնարաւորութիւն են տալիս խորութեամբ ուսումնասիրել Հայաստանի այդ ժամանակաշրջանը:

Պատմաբանն այն կարծիքին է, որ պետք է խոր քննութեան առնել տարբեր աղբիւրներում եղած տեղեկատուութիւնը, լուսաբանել իրարամերժ տեսակետները, ժամանակին բնորոշ իրադարձութիւններով բացել թագաւորների կերպարները եւ պատմական խորքով ներկայացնել տուեալ ժամանակաշրջանը:

Անցնող տարում տպագրուել է Բագրատունեաց յաջորդ արքայի՝ Սմբատ Բ Տիեզերակալի մասին գիրքը, այս պահին հեղինակն աշխատում է Գագիկ Ա Շահնշահի դարաշրջանի ուսումնասիրութեան վրայ, իսկ Յովհաննէս Սմբատ եւ Գագիկ Բ թագաւորների մասին



մենագրութիւններով կարծես կ'ամբողջանայ եւ յստակ կերպարանք կը ստանայ Բագրատունեաց դարաշրջանի ուսումնասիրումը: Հեղինակի նպատակն է նիւթերն ամբողջացնել եւ տպագրել Բագրատունեաց դարաշրջանին վերաբերող երկու մեծ հատոր՝ «Հայաստանը Բագրատունեաց դարաշրջանում. քաղաքական պատմութիւն» խորագրով: Երկհատորեակով կ'իրականանայ Բագրատունեաց դարաշրջանի հայոց պատմութեան ուսումնասիրութեան հեղինակի առաքելութիւնը:



Փրոֆեսոր Արման Եղիազարեանը ղեկավարում է ԵՊՀ-ի Սփիւռքագիտութեան ամբիոնը եւ «Հայաստանը Բագրատունեաց դարաշրջանում» նիւթը դասաւանդում է մագիստրատուրայում: Յաւով է նկատում՝ ապագայ պատմաբանները նախընտրում են ուսումնասիրել հիմնականում պատմութեան ժամանակակից փուլը: «Ուսանողներն այդ միտումը հիմնաւորում են մասնագիտութեան հեռանկարայնութեան տեսանկյունից՝ կարծելով, որ մեր երկրում ցանկացած տեղ աշխատելու համար ցանկալի է լինել արդի շրջանի պատմութեան մասնագէտը»,-նշում է պատմաբանն ու վստահեցնում՝ մշտապէս

սովորեցնում է ուսանողներին, որ պատմութեան արդիականութիւնը միայն ժամանակակից պատմութեան ուսումնասիրութեամբ չի ամփոփուում, եւ նոյնքան արդիական է նաեւ Բագրատունեաց դարաշրջանի ուսումնասիրութիւնը՝ մի շարք պատճառներով:

Որպէս օրինակ՝ Արման Եղիազարեանը նշեց, որ մեր հարեւաններն անթաքոյց նենգափոխում են հայոց պատմութիւնը. պետք է նման նենգափոխումներին տալ հիմնաւորուած պատասխաններ՝ արմատները փնտռելով հենց Միջնադարում:

Փրոֆեսորը ջանք չի խնայում, որ իր ուսանողներին ցոյց տայ տնտեսական, քաղաքական, մշակութային պատմութեան չուսումնասիրուած, լրացման կարիք ունեցող եւ բաց դաշտերը, առանձին անհատներին, երեւոյթները, աղբիւրներն ու զարգացումները, որոնք սպասում են իրենց հետազոտողին:

«Պատմագիտութեան զարգացման միջազգային տեմպերին ինտեգրուելու, մրցունակ լինելու համար դեռ բաւարար վիճակում չենք: Մեզանում վաղուց խախտուած է հայոց պատմութիւնը ըստ ժամանակաշրջանների ուսումնասիրելու համամասնութիւնը. միջնադարագէտներ, հնագոյն շրջանի մասնագէտներ քիչ են, այնինչ կան այդ խնդիրները լուծելու բոլոր հիմքերը, պարզապէս պետք է տեղի ունենայ համապատասխան խնդրադրում, որ մեզ պետք են պատմաբաններ մեր պատմութեան բոլոր դարաշրջանների ուսումնասիրութեան առումով»,- նշեց Արման Եղիազարեանը:

ԹՄՄ-ի Լուրեր

«Այսօր, Առաել Քան Երբեւէ, Անհրաժեշտութիւն Է Հայոց Պատմութեան Բոլոր Փուլերի Ուսումնասիրումը». «Վահան Թեքեան» Մրցանակակիր Արման Եղիազարեան

Սկիզբը Էջ 04

Նա այն կարծիքին է, որ խնդիրներ կան նաեւ մեր գաղափարաբանութեան մէջ, քանի որ, օրինակ, Երեւանի աղբիւրներէն համարելու հարեւան երկրի պատմաբանների եւ ղեկավարների պնդմանը հակադարձող, այդ պնդումների սկզբնականը հիմնաւորող թեմայի ուսումնասիրումը պատմութեամբ զբաղուող հաստատութիւններից որոշները համարում են ոչ այնքան արդիական ու հեռանկարային: Արման Եղիազարեանը նաեւ նկատում է, որ անկախութեան տարիներից սկսած՝ մեր երկրում հայագիտութեան հանդէպ կայ լուրջ մօտեցում, իսկ վերջին 10 տարիներին

յատկապէս պետութիւնը հակուած է հայագիտական թեմաներին տալ մրցակցային առաւելութիւն: «Մենք խնդիրներ ունենք գիտական քաղաքականութիւն վարելու տեսանկիւնից: Բուհերը եւ ակադեմիական հիմնարկները կարիք ունեն փոխելու գիտութեան զարգացման քաղաքականութիւնը: Պէտք է սահմանել խնդիրներ, ապահովել նպատակադիր ընթացք՝ անցեալի փորձը հասկանալու, մեր պատմութիւնը այլոց յարձակումներից պաշտպանելու եւ սերունդների դաստիարակութիւնը ապահովելու համար. եղած ռազմավարութիւնը յստակ չէ», - նշեց Արման Եղիազարեանը: ԵՊՀ Սփիւռքագիտութեան ամբիոնի

վարիչ Արման Եղիազարեանի հետաքրքրութեան շրջանակը Սփիւռքի ձեւաւորման պատմութեան շրջանն է: Այդ համատեքստում նա քաջաձանօթ է «Թեքեան» Մշակութային Միութեան ազգանուէր գործունեութեանը ինչպէս Սփիւռքում, այնպէս էլ մեր երկրում՝ սկսած 1991 թուականից: «Վահան Թեքեան» մրցանակաբաշխութեանը մասնակցել է վստահութեամբ, որ իւրաքանչիւր մասնակցի վաստակը գնահատուելու է ըստ արժանւոյն եւ անաչառութեան դիրքերից: «Այս ամենամեայ միջազգային մրցանակաբաշխութիւնն անչափ կարեւոր իրադարձութիւն է մշակոյթի եւ գիտութեան բնագաւառում: Յոյս ունեմ, որ «Հայագիտութեան»

մրցանակը յետագայ տարիներին եւս կը պահպանուի», - նշեց Արման Եղիազարեանը: Նշենք, որ Հայաստանի եւ ԱՄՆ եւ Գանատայի «Թեքեան» մշակութային միութիւնների համատեղ նախաձեռնութեամբ արդէն 27-րդ անգամ անցկացուող «Վահան Թեքեան» մրցանակաբաշխութիւնն իրականացում է «Շաքէ Ղազարեան» Հիմնադրամի ֆինանսական աջակցութեամբ: Այս տարիների մրցանակների եւ դրամական պարգէների են արժանացել հարիւրից ավելի արուեստագէտներ, գիտնականներ:

**Հայաստանի «Թեքեան»
Մշակութային Միութեան
լրատուական կեդրոն**

Առողջապահական

Հետազոտութիւններ՝ «Օմիքրոն» Տարբերակի Յատկութիւնները Բացայայտելու Ուղղութեամբ



2021ի Նոյեմբերին, Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը յայտարարեց Զորոնա ժահրի նոր տարբերակի՝ «Օմիքրոնի» մասին: Այժմ, գիտնականները Հարաւային Ափրիկէի եւ ամբողջ աշխարհի մէջ հետազոտութիւններ կը կատարեն «Օմիքրոն» տարբերակի յատկութիւնները բացայայտելու համար: Այս պահուն, տակաւին պարզ չէ, որ «Օմիքրոն» տարբերակը միւսներուն հետ բաղդատելով ավելի՞ վարակելի է, թէ՛ ոչ, հակառակ անոր որ Հարաւային Ափրիկէի շրջաններուն մէջ, ուր շրջանառութեան մէջ է այս տարբերակը, ակեցած են քորոնա ժահրային հիւանդու-

թեան պարագաները: Ներկայիս կ'իրագործուին համաճարակաբանական հետազոտութիւններ՝ պարզելու համար, որ արդե՞ք անկա պայմանաւորուած է «Օմիքրոն» տարբերակով, թէ՛ այլ գործօններով: COVID-19-ի յարուցիչի բոլոր տարբերակները, ներառեալ ամբողջ աշխարհի մէջ գերիշխող «Տեյթա»-ն, կրնան յանգեցնել հիւանդութեան ծանր ընթացքի եւ մահուան՝ յատկապէս «ռիսք»ի խումբի անձե-րու ծիրին մէջ: «Օմիքրոն»ը կրնայ բարձրացնել կրկնավարակի վտանգը: Ատոր համաձայն, պատուաստները կը շարունակեն արդիւնաւետօրէն պաշտպանել հիւանդութեան ծանր ընթացքէն եւ մահուան դէպքերէն:

«Օմիքրոն» տարբերակը մտահոգիչ ըլլալով, Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը կը յանձնարարէ աշխարհի երկիրներուն շարք մը միջոցառումներու դիմելու, այդ շարքին գորացնելով վերահսկողութիւնը եւ աշխուժացնելով «genomic sequencing» գործընթացը: Երկիրները պէտք է շարունակեն արդիւնաւետ հակահամաճարակային միջո-

ցառումներ ձեռնարկել COVID-19-ի յարուցիչի շրջանառութեան ընդհանուր մասշտապները կրճատելու ուղղութեամբ: Բացի ատկէ, անհրաժեշտ է ապահովել քորոնա ժահրային հիւանդութեան դէմ պատուաստներու հաւասար հասանելիութիւն բոլորին համար՝ առաջնահերթութիւն տալով «ռիսք»ի խումբերուն:

Վտանգներ Կրնան Պահուըտած Ըլլալ Տօնածառներուն Մէջ



Տօնածառները ամբողջովին անվտանգ եւ անվնաս չեն: Այս մասին, յղում կատարելով բրիտանացի գիտնականներուն, զգուշացուցած է «The Sun» պարբերականը: Գիտնականներու խումբը պարզած է, որ տօնածառներուն մէջ կան ոչ միայն հակածիւններ, այլեւ՝ բորբոսի 53 տեսակ: Այս բոլոր նիւթերը կրնան մարդոց

մօտ գլխացաւ ստեղծել: Աւելին, «ալերճիք» հիւանդութիւններ ունեցող մարդիկ յաճախ շատ զօրաւոր կերպով կ'արձագանգեն բոյսերու եւ խոտաբոյսերու հոտերուն, անոնց մօտ ստեղծելով հազ եւ քթախոտութիւն, կարելի է նաեւ՝ ականջի ցաւ:

Էրտողան Եւ Թրքական Լիրան

Սկիզբը էջ 03

Թրքական լիրան 2000 թիւէն ի վեր կը հետեւի ազատ փոխանակման համակարգին, որ կը նշանակէ ան ենթակայ է շուկայի առաջարկին և պահանջին, սակայն Թուրքիոյ Նախագահը մտահոգուած է ինչ որ ինք համոզուած է որ դուրսէն Թուրքիոյ դէմ դաւադրութիւններ կը կատարուին: Էրտողանը կը կարծէ որ 2016 թուականի յեղաշրջումի ճախողումէն յետոյ Արևմուտքը կը փորձէ Թուրքիան տկարացնել այլ միջոցներով, մոռնալով որ յեղաշրջումի իրականացնողը իր գործընկեր իսլամ մտաւորական և քարոզիչ թուրք Ֆեթուլլահ Կիւլէնն էր: Ամենայն դէպս ԱՄՆ-ն եւ արեւմտեան երկիրներուն ձեռնառու չէ տկարացնել թրքական տնտեսութիւնը, ուր անոնք հարիւր միլիարդներով ներդրումներ ունին:

Պետք է նկատի ունենանք, որ վերջին ճգնաժամի օրերուն Թուրքիան կրկին մեծ աջակցութիւն ստացաւ, բայց այս անգամ Նախկին թշնամի՝ Ապու Տապիւն, որ այժմ կը մօտենայ իրեն որովհետեւ Էրտողանը սկսած է ներքին թուրքիոյ մէջ բնակող «Իսլամներուն» - Սուսուլման եղբայրներու կուսակցութեան» անդամներուն Եգիպտոսի հետ իր յարաբերութիւնները բարելաւելու համար. Ապու Տապիւն յայտարարեց թէ 10 միլիարդ տոլարի ներդրում պիտի կատարէ Թուրքիոյ մէջ. բան մը որ ամրապնդեց լիրայի դիրքերը և կարելի է օգնէ անոր թէկուզ որոշ ժամանակով:

Թուրքիոյ տնտեսութեան ամենակարեւոր խոչընդոտներն են կարճաժամկետ արտաքին պարտքերը որոնք առևտրային հաշուեկշիռին մէջ բաց կը պատճառեն. անոնց ամենամեծը Նաւթի ներածութեան ծախսերն են, թէև Թուրքիան բաժին կը ստանայ Իրաքեան Նաւթէն որ կ'արտածուի իր տարածքով, եւ սև շուկայէն ձեռք կը բերէ Սիրիական հանքավայրերէն արտադրուող Նաւթը ՏԱԷԸ-ի կամ ուրիշ միջոցներով:

Նաւթը Թուրքիոյ տնտեսութեան միակ տկար մասը չէ: Էրտողանի արկածները և Օսմանեան կայսրութեան վերակենդանացնելու մեծ երազները դրդեցին անոր ռազմական արկածախնդրութեան ձեռնարկել՝ սկսած Սուրիոյ ներխուժումէն, այնուհետև Զիւսիսային Իրաքի վրայ յարձակումները՝ Քիւրտական Բանուորական կուսակցութեան զինեալները հալածելու պատրուակով եւ թրքական զինուորի մշտական ներկայութիւնը Իրաքի մէջ Սուսուլ քաղաքի մօտ գտնուող Բայշիքա գիւղաքաղաքի մէջ, նմանապէս սուրիացիներուն Լիպիա ուղարկելը, ալ չխօսիք 1974 թ. հիւսիսային Կիպրոսի մէջ հաստատուած թրքական (բարեկամական) 30 հազար զինուորներու մասին:

2016 թիւէն ի վեր Բաթարի մէջ թրքական ռազմական ճամբար գոյութիւն ունի, եւ Բաթարի, Մեուտական Արաբիոյ ու Արաբական Էմիրութիւններու միջեւ ծագած ճգնաժամէն ետք Թուրքիոյ հետ Բաթարի յարաբերութիւնները ամրապնդուեցան և վերածուեցան դաշինքի: 2017 թիւէն Սոմալիոյ և Ջիբուտիի մէջ թրքական ուժեր կան այդ երկիրներու զինեալ ուժերը վերապատրաստելու պատրուակով, և Ատրաքէնի մէջ ուր Թուրքիոյ եղբայրական ուժերը կը գտնուին բոլոր տարածութիւններուն մէջ. ի վերջոյ Սուսուլի Սուսուլը կողմի վրայ ռազմածովային ճամբար ստեղծելու գործընթացը, որ ճախողեցաւ այնտեղ ռազմական յեղաշրջումէն յետոյ:

Թուրքիան փոքր երկիր մը չէ, և անոր տնտեսութիւնը մեծապէս կախուած է գիւղատնտեսական արտադրանքներէ, փոքր և միջին արդիւնաբերութիւններէն, ինչպէս նաև ծառայութիւններու ոլորտներէն, ինչպիսի են զբօսաշրջիկութիւնը, օդանաւային փոխադրութիւնները, շինարարութիւնը և անշարժ գոյքերու ներդրումը, որոնք տարեկան աւելի քան 20 միլիարդ տոլար կապահովէին մինչև (պսակածէ ժահրի) գորոնաւայրուսի ճգնաժամը: Թուրքիան աշխարհի 20 խոշոր արդիւնաբերական երկրներու շարքին էր, սակայն անոր վարկանիշը Նախ իջաւ 17-րդ, ապա 19-րդ, իսկ այժմ 21-րդն է, այսինքն՝ ցուցակէն դուրս է:

Լիրայի արժեզրկումը բացասական ազդեցութիւն կ'ունենայ որոշ ներդրողներու վրայ, որոնք են անշարժ գոյքերու խոշոր ներդրողները, ուր այդ շէնքերու եւ յարկաբաժիններու արժեքները կը նուազին. Միւս վնաս կրողներն են ընդհանրապէս սակարաններու լիրայի առուծախով զբաղողները և ուրիշներ: Լիրայի արժեզրկումը մեծ ազդեցութիւն ունի Նաեւ դուրսէն ներդրող ընկերութիւններու վրայ, որովհետեւ ապրանքները և ծառայութիւնները ներմուծելու համար տոլար կամ եւրօ կը վճարեն, և այն ընկերութիւնները, որոնք դրամատուներէն պարտք ստացած են բարձր տոկոսներով: Սակայն Թուրքիոյ քաղաքացին բոլոր դէպքերուն ամենամեծ վնաս կրողն է մասնաւորապէս աղքատ եւ միջին խաւը, որովհետեւ զինքը շարունակ սղաճի ենթակայ են. Այս բոլորին դիմաց կառավարութիւնը վեց ամիսը մէկ կը ճշգրտէ աշխատողներու աշխատավարձերը, բայց սովորական



քաղաքացին կը մնայ այդ ճշգրտումներէն դուրս:

Միւս կողմէ, թրքական լիրայի անկումը ձեռնառու է գիւղատնտեսական արտադրանքներ արտածողներուն համար նմանապէս տեղական ներքին արդիւնաբերութեան համար, որ կախուած չէ արտերկրէն եկած հումքէն: Զբօսաշրջիկութիւնը Թուրքիոյ տնտեսութեան Եական մասն է: Մինչ գորոնաւայրուսի ճգնաժամը այն Թուրքիոյ տարեկան միլիարդներով տոլարներ կ'ապահովէր, և կառավարութիւնը կ'օգտուէր այդ ներմուծումէն՝ նուազեցնելով առևտրի հաշուեկշիռի բացը: Ներկայիս տնտեսագետները Թուրքիոյ արտաքին պարտքը կը գնահատեն 450 միլիարդ տոլար, մինչդեռ ներքին արտադրութիւնը, Նոյն աղբիւրներու համաձայն, այդ գումարի կէսն է: Տարօրինակ է որ Էրտողանը ԱՄՆ-ը եւ Արևմտեան երկիրները իր թշնամիները կը նկատէ երբ Նոյն ժամանակ անոնց հետ ռազմական դաշինքի մէջ է և ԱՄԹՕ-ի անդամ. Թուրքիոյ ներդրողներու մեծ մասը այդ երկիրներէն կու գայ, յատկապէս Գերմանիայէն: Միևնոյն ժամանակ, երբ ան կատէ Ամերիկան և Արևմուտքը, ան կը ձգտի մնալ ԱՄԹՕ-ի կազմի մէջ՝ միաժամանակ Ռուսաստանէն պաշտպանական զենք գնելով և ԱՄՆ-ը եւ Արևմուտքի հետ ճգնաժամեր ստեղծելով:

Թուրքիոյ հասարակական կարծիքի համաձայն՝ ներկայիս Էրտողանին սատարողներու տոկոսը միայն 30% է, բան մը որ քաջալերեց Զանրապետական կուսակցութեան (Զեմալ Աթաթուրքի հիմնադրած աշխարհիկ կուսակցութեան) և Թուրքիոյ խորհրդարանի ընդդիմութեան առաջնորդ Զեմալ Քըլժուար Օղլուին, պահանջել արտահերթ ընտրութիւններ կայանան եւ 2023 թ. Նախատեսուած ժամկետին չսպասեն, որովհետեւ Էրտողանի յաղթելու հնարաւորութիւնը ներկայիս ցած է: Զըլժուարը և անոր աշխարհիկ կուսակցութիւնը յաղթեցին քաղաքային ընտրութիւնները Պոլսոյ և Անգարայի մէջ, մինչ Էրտողանի կողմէ աջակցուող թեկնածուները պարտուեցան այնտեղ, անոնցմէ՝ Նախկին վարչապետ Պինալի Եըլլուրըմ: Սակայն Էրտողանի թեկնածուները յաղթեցին կրօնական ուղղութեամբ ունեցող քաղաքներու մէջ. Նախագահական ընտրութիւնները, որոնք համընդհանուր ընտրութիւններ են, եւ կը ներառեն ողջ Թուրքիան, այնտեղ ըլլալով Էրտողանամետ գիւղերը, որոնց կարողացաւ Էրտողան իրեն կողմը գրաւել կրօնի միջոցով շատ մեծ ազդեցութիւն կարելի է ունենան ի շահ Էրտողանին, եթէ անոնք բոլորը ընտրութիւններուն մասնակցին:

Վերջապէս, ո՞ր պիտի հասնի թրքական լիրան եւ թաղուի:

-Արդե՞ք Էրտողանը պիտի շարունակէ իր տնտեսական քաղաքականութիւնը և հոսանքին հակառակ լողալը ու կարողանա՞յ դիմանալ մինչև վերջ:

-Արդե՞ք Էրտողանի կողմէ հոգեպէս պատրաստուած կրօնամոլ թուրք ընտրազանգուածը պիտի ընդունի՞ անոր որպէս Նախագահ՝ աշխարհիկ Զըլժուարի ճանապարհը կտրելու համար:

- Թէ Էրտողանը պիտի կարողանա՞յ համոզել թուրքերուն որ ինք անաւարտ օրակարգ ու ծրագրեր ունի եւ Թուրքիան իրեն կարիքը ունի և անփոխարինելի է:

- Կամ ան պիտի դիմէ՞ տարածաշրջանի մէջ տարածուած կեղծիքներուն՝ իշխանութեան մնալու համար:

- Կամ ինք աս անգամ զինուորական յեղաշրջում պիտի կատարէ՞ իշխանութեան մնալու համար:

Այս բոլոր հնարաւորութիւնները կարելի են, և մենք պետք է սպասենք:

Սլաք

Պատասխան ԱլԷՆ Սիմոնեանին

ՌՈՒԲԻՆԱ ՕՐԱՆԵԱՆ

Սոցցանցերը ողողում են ԱԺ-ի նախագահ ԱլԷՆ Սիմոնեանի խօսքի մասին գրառումներով: Նա խօսեց հայ գերիների մասին, ասելով թե՛ նրանք չկան իրեն համար, քանի որ դասալիք են: Նա մտքի գոհարներ շաղ տուեց Իսրայելի օրինակը բերելով, որ նրանք չեն բանակցում գերիների հարցով:

Նախ մի կարեւոր վերլուծում,-

Իսրայելի ու Լիբանանի՝ Հիզպոլլահի, միջեւ պատերազմից յետոյ, Իսրայելը ազատ արձակեց գերի ընկած հազարաւոր լիբանանցու ու պաղեստինցու, որպէսզի երկիր վերադարձնի պատերազմում մահացած իր զինուորների դիակները: Այսինքն՝ **Իսրայելը ԲԱՆԱԿՏԵՑ** ու մեծ զիջումներով յետ ստացաւ իր մահացած զինուորների դիակները:

Ուզում եմ գրել իմ կարծիքը,-

Վերջացան ՏԻՄ-ի ընտրութիւնները Հայաստանում, ու պարզուեց՝ ընդհանուր հաշուով պարտուել է ԶԴ-ն: Ու հիմա նրանք՝ ի տես այդ պարտութեան, էլ նպատակ չունեն դերեր խաղալ, շարունակել խաղն ու պարը, ու հիմա սկսել են լրիւ բացայայտել իրենց իրական դէմքը: Այսուհետ նման խօսքեր ու դիրքորոշումներ էլի կը հանդիպենք:

Հայաստանի իշխանութիւնները չունեն ժողովրդի նեցուկը, որի մասին այդքան յոխորտալով խօսում էին, եւ այդ հիման վրայ՝ հերթական նուէրները յանձնում թշնամուն: **Հիմա վիճակ է փոխուել:** Վիճակ է փոխուել այն առումով, որ ժողովուրդը վստահեց հիմնականում նոր դէմքերի: Այսպիսով՝ վերջակէտ դրուեց ԶԴ-ականների յաջորդողը նախկիններին տեսնելու, նախկինների վերադարձով մարդկանց վախեցնելու ու քուէներ կորզելու ընթացքին: Վիճակ է փոխուել, ու սա չեն կարող նկատի չունենալ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի քաղաքական դաշտում եղածները:

Հետաքրքիր զարգացումներ են սպասում: Նոր դէմքեր, նոր ուժեր: Սա է ժողովրդի ակնկալիքը: Իսկ եթէ դեռ կայ ցանկութիւն եւ յոյս Հայաստանում ձեւաւորուած քաղաքական միաւորների ապագայ դրական գործունէութեան վերաբերեալ, ապա դա կարող է պատահել ՄԻԱՅՆ հիմնական փոփոխութիւններով:

Առաջին հերթին՝ վերանայել իրենց մօտե-



ցումները ժողովրդի հետ շփուելու տեսակետից. ժողովրդին մարդու տեղ դնեն, քանի որ՝ կեանքը փաստեց՝ իրական փոփոխութիւնը վերելում չի լինում, ու նրանք պիտի գիտակցեն ժողովրդի լայն զանգուածների մօտ աշխատելու կարեւորութիւնն ու ճիշտ վերաբերմունքը:

Այո, հիմնական բան պիտի փոխուի ազգային-հասարակական ու քաղաքական միաւորներում. **Իրական սերնդափոխութիւն պիտի տեղի ունենայ**, որպէսզի ճամբայ բացուի նոր գաղափարների եւ խոստումնալից նոր ուժերի համար:

Աւարտին, ուզում եմ կիսել մերօրեայ գրողներից մէկի ֆէյսպուքեան կարճ ակնարկը՝ ԱլԷՆ Սիմոնեանի ցնդաբանութեան կապակցութեամբ:

Հռիփսիմէ Յովհաննիսեանի ֆէյսպուքի էջից

Պարոն ԱլԷՆ, ես գրել եմ պատերազմի մասին «44 օր» գիրքը: Երանի չէր մեր բոլոր զոհուած քաջորդիները դասալիքներ լինէին: Նրանք շատ երազներ ունէին, ոչ մէկի լուսանկարը չի տեղաւորուում իր շրջանակի մէջ: Դուք գրկել էք ձեր աթոռները, վախեցել էք գահավիժումից, անգամ վառօդի հոտը չդիպաւ ձեր փողկապակիր, ճերմակ օձիքին, չտեսաք ինչպէս են գլխատում կեանքերը: Դասալիքը դուք էք:

ՅԳ. Ճիշտ է Հռիփսիմէ Յովհաննիսեանը. դասալիքը ԶԴ-ականների մի ստուար խումբն է, որոնք չեն ծառայել բանակում, ու հիմա յաւակնում են տնօրինել բանակը, երկիրը, ու գերիների մասին աւել/ պակաս դուրս տալ: Ռ.Օ.):

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Հայրենական

Պայծառատեսների փակ ու մութ աչքերում Տեսայ բախտս կորսուած ու անհետքերում, Բայց և տեսայ օրերը կանաչ քամիների Ու չիմացայ այդ ով ինձ պիտի ների:

Պայծառատեսների փակ ու մութ աչքերում Տեսայ ինձ համար ժանգոտած մի ներում, Ու տեսայ օրերը ներման քամիների, Տեսնես այդ ով ոչնչի համար ինձ պիտի ների:

Բայց և տեսայ օրերը ուրախ անձրևների Ու ժպիտներ հազար համեստ արևների, Ու երեսէկ մէկ էլ էլ մի կանաչ գարուն տեսնէի Փակ ու մութ աչքերում պայծառատեսների:


ՎՐՈՅՐ ԳԱՅԻ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

11 2021
ԴԵԿՏԵՄԲԵՐ

Կրկ Երկ Երք Չրք Հնգ Ուրք Շրք

			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



ԼԵՒՈՆ ԹԻԹԻՒՆՃԵԱՆ
(1905 – 1968)
«Խնձոր»

Հայկական Լուրեր

Ալընտրանքային Ճանապարհը Լուծում ԶԷ...

Շաբ. էջ 02-ԷՆ

Մանրամասն անդրադարձած եմ հայ գերիներու ազատ արձակման, Հայրենիք անոնց վերադարձի հրատապութեան, որոնք ապօրինաբար կը պահուին Ազրայէլցեանի մէջ:

Եւս գլխաւոր քարտուղարին շնորհակալութիւն յայտնած եմ պատերազմի սկիզբը ու անկէ ետք զինուած յարձակումները դադրեցնելու յայտարարութիւններուն եւ կոչերուն, իր անձնական ջանքերուն համար:

Մարիա Պէյշինովիչ Պուրիչը բարձր գնահատած է ՀՀ մարդու իրաւունքներու պաշտպանի աշխատանքը բարդ ու ճգնաժամային իրավիճակի մէջ:

Գլխաւոր քարտուղարը յատուկ ընդգծած է ՀՀ մարդու իրաւունքներու պաշտպանի կարեւոր դերը

երկրին մէջ մարդու իրաւունքներու պաշտպանութեան հարցին մէջ: Կարեւոր համարած է Պաշտպանի կողմէ Եւրոպայի խորհուրդի նախարարներու կոմիտէ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի վճիռներու կատարման դիրքորոշումներ ուղարկելու փորձը: Ես կարեւոր համարած եմ այս փորձը ու նաեւ նշած, որ ատիկա կ'ընենք նաեւ ՀՀ-ներու հետ համատեղ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ Զինուած ուժերու մէջ մարդու իրաւունքներու, կանանց իրաւունքներու պաշտպանութեան, խոշտանգումներու կանխարգիլման վերաբերող եւ շարք մը այլ հարցեր:

Հանդիպման աւարտին Եւս գլխաւոր քարտուղարին փոխանցած եմ նշուած թեմաներուն վերաբերող արտահերթ զեկոյցներս»:

Մշակութային Արձագանգ

Շահումեանի Նորայայտ Դամբարանէն Հնագիտական Բացառիկ Նմուշներ Ներկայացուեցան

ՀՀ ժողովրդական արուեստներու թանգարանին մէջ ցուցադրուեցան վաղ պրոնզէ դարու Կուր-արաքսեան մշակոյթը ներկայացնող նմուշներ՝ Հայաստանի պատմութեան թանգարանէն եւ Արմաւիրի մարզի Շահումեան համայնքին մէջ այս տարի յայտնաբերուած դամբարանէն, որ իր տեսակով առաջինն է ՀՀ տարածքին մէջ: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:



Աղբիւրին համաձայն՝ Շահումեանի դամբարանը յայտնաբերած է Մուշեղ Յարութիւնեանը՝ իր այգիին մէջ ծառատունկի ժամանակ: Յուշարձանի եւ տարածքի ուսումնասիրութիւնը սկսած է այս տարուան Օգոստոսին: Մուշեղ Յարութիւնեանի խօսքով, եթէ պարզուի, որ մօտակայ տարածքները եւս հնագիտական նշանակութիւն ունին, ուստի պիտի տրամադրեն այդ նպատակներով: ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ուսումնարանի հնագիտական արշաւախումբը

աշխատանքներուն առաջին իսկ օրերուն պարզած է, որ կը պեղուի ԶԱ III հազարամեակի առաջին քառորդով ժամանակագրուող խիստ ուշագրաւ դամբարան մը:

ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ուսումնարանի հնագիտական արշաւախումբի ղեկավար, պատմական գիտութիւններու դոկտոր Ռուբէն Բաղալեանի խօսքով՝ պեղումներուն ընթացքին յայտնաբերուած է դամբարան, որ դեռ ամբողջութեամբ ուսումնասիրուած չէ: «Անպատեհի կերպով պարզուեցաւ, որ անիկա հսկայական տարածք է, որ ունի աւելի քան 30 հանգուցեայի կմախք եւ իրենց ուղեկցող իրեր՝ աւելի քան 60 կաւէ, մօտ 100 պրոնզէ իր, հազարաւոր ուլունքներ տարբեր նիւթերէ պատրաստուած եւ այլն», - ըսաւ ան: Բաղալեան շեշտեց, որ միանշանակ պիտի շարունակեն աշխատանքները եւ յոյս ունին, որ պիտի աւարտեն ամբողջ ուսումնասիրութիւնը, քանի որ անիկա արտասովոր յուշարձան-դամբարան է:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալեան շնորհաւորեց բոլորը նմանատիպ բարձրարժէք գտածօներուն առնչութեամբ: Փոխնախարարը նշեց, որ կառավարութեան հետ ունեցած քննարկումներուն իբրեւ արդիւնք՝ որոշուած է այսուհետեւ Հայաստանի

ընդերքի գանձերը դարձնել հանրային սեփականութիւն, եւ ջանք չինսայել իրականացնելու միջոցառումներ, որոնք ուղղուած պիտի ըլլան մեր արժէքներու հանրայնացման:

Ցուցահանդէսը, որ կ'իրականացուի ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ուսումնարանի նախաձեռնութեամբ ու Հայաստանի պատմութեան թանգարանի եւ Յովի. Շարամբէ-յեանի անուան ժողովրդական



արուեստներու թանգարանի հետ համագործակցութեամբ, բաց պիտի մնայ մինչեւ Դեկտեմբեր 30:

Թրքական Բարքեր


Ուաշինկթըն Կը Քննադատէ Թուրքիոյ Հայ Համայնքը Ահաբեկելու Արարքները

Միացեալ Նահանգներու Կրօնական ազատութիւններու միջազգային յանձնաժողովին պատրաստած Նորագոյն զեկուցումին մէջ, Թուրքիա դարձեալ կը մեղադրուի կրօնական փոքրամասնութիւններու շուրջ թշնամական քաղաքական միջավայր ստեղծելու յանցանքով:

Չեկոյցին մէջ կը նշուի, որ Թուրքիոյ կառավարութիւնը կը հանդուրժէ երկրի իսլամ եւ ոչ-իսլամ կրօնական փոքրամասնութիւններու դէմ ուղղուած ատելութեան խօսքը եւ բռնութեան արարքները, ընդգծելով, որ յատկապէս հայ համայնքը ահաբեկման ենթարկելու նոր ձեւեր ի յայտ եկած են վերջերս:

Կը շեշտուի, որ հայկական կրօնական ժառանգութիւնը վտանգի տակ է եւ թէ կառավարութիւնը շարունակաբար կը միջամտէ կրօնական փոքրամասնութիւններու ներքին գործերուն:

«2013-էն ի վեր, Թուրքիոյ կառավարութիւնը կը խոչընդոտէ կրօնական փոքրամասնութիւններու հիմնադրութիւններու խորհուրդներու նոր անդամներու ընտրութեան գործընթացը: Այդ գործելաոճը



աստիճանաբար կը նուազեցնէ խորհուրդի անդամներու թիւը՝ մահուան եւ հիւանդութեան պատճառով, անոնց առօրեայ աշխատանքները կը դժուարացնէ, ինչպէս նաեւ կը վնասէ կարգ մը համայնքներու, ինչպէս օրինակ՝ Հայ Առաքելական եկեղեցւոյ: Բացի այդ, համաճարակը եւ Լեռնային Ղարաբաղի մէջ պատերազմը նպաստած են հակահայկական դաւադրութիւններու աճին եւ բողոքի ցոյցերու», - կ'ըսուի զեկոյցին մէջ:

Անոր մէջ նաեւ կը նշուի, որ ընդդիմադիր խորհրդարանական Կարօ Փայլան սպառնալիքներու թիրախ կը մնայ, պարզապէս հայ ըլլալուն համար, կ'ընդգծուին հակասեմականութեան աճը եւ ալաուի համայնքին նկատմամբ կիրառուող սահմանափակումները:

Ապաքինման Մաղթանք

ՌԱԿ Պայքար ակումբի պատուոյ ատենապետ եւ երէց կուսակցական, ընկ. Աւետիս Թորոսեան առողջական պատճառներով վերջերս հիւանդանոց փոխադրուած է եւ ենթարկուած է բուժման: Առողջութիւն եւ արեւշատութիւն կը մաղթենք մեր սիրելի ընկերոջ:

Իմացանք, որ ընկ. Վահան Գրիգորեան ենթարկուած է սրտի բարդ գործողութեան եւ այժմ կը բոլորէ կազդուրման շրջան մը: Շուտափոյթ ապաքինում եւ առողջութիւն կը մաղթենք մեր սիրելի ընկերոջ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ

Արիի. Հայր ՄԱՆՈՒԷԼ Եպս. ՊԱԹԱԳԵԱՆԻ

Վախճանման Զառասույցին առթիւ
Սուրբ եւ Անմահ Պատարագ
ու Հոգեհանգստեան Պաշտօն

Կիրակի 12 Դեկտեմբեր 2021ին,

- Չմնառու Փոխման Սրբոյ Կուսին եկեղեցի, առաւօտեան ժամը 10:30ին:
- Հայ Կաթողիկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Սուրբ Եղիա Աթոռանիստ եկեղեցի (Պէյրուս), առաւօտեան ժամը 11:30ին:
- Հայ Կաթողիկէ Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցի (Աշրաֆիէ), առաւօտեան ժամը 10:30ին:
- Հայ Կաթողիկէ Սուրբ Փրկիչ եկեղեցի (Պուրճ Համուտ), առաւօտեան ժամը 10:00ին:
- Հայ Կաթողիկէ Սուրբ Խաչ եկեղեցի (Չալքա), առաւօտեան ժամը 10:00ին:
- Հայ Կաթողիկէ Սուրբ Վարդարանի Տիրամայր եկեղեցի (Այնճառ), առաւօտեան ժամը 10:30ին:
- Հայ Կաթողիկէ Ֆաթիմայի Տիրամայր եկեղեցի (Չահլէ), առաւօտեան ժամը 10:00ին:

Դիւան Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի